

# ՈՐՔԱՆՈ՞Վ ԹԵՔԱԿԱՆ ԿԱՍ ԿՑԱԿԱՆ Է ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՒՄԸ

## ՍԱՐԳԻՍ ԱՎԵՏՅԱՆ

Առավել ընդունված տեսակետի համաձայն՝ հին հայերենի անվանական հոլովումը հիմնականում թեքական բնույթ ունի, բայց հանդես է բերում կցականության որոշ տարրեր: Մասնավորապես գործիական հոլովի կազմության կցական եղանակը (հմմտ. եզ. գործ. *քաղաք-ա-ւ-Յ* և հոգ. գործ. *քաղաք-ա-ւ-ք*) ակնհայտ և բոլորի կողմից ընդունված իրողություն է<sup>1</sup>: Բայց մնացած հոլովածների հարցում հետազոտողների կարծիքները տարամիտվում են: Մի խումբ լեզվաբաններ գտնում են, որ հոգնակի ուղղականը ևս կազմվում է կցական եղանակով՝ եզ. ուղղականի ձևին *ք* հոգնակերտի ավելացմամբ: Ըստ այդմ՝ թե՛ եզակիում և թե՛ հոգնակիում ուղղական հոլովի իմաստն արտահայտվում է գրոյական վերջավորությամբ, իսկ *ք*-ն միայն հոգնակիություն է ցույց տալիս (օր. եզ. ուղղ. *քաղաք-Յ-Յ*, հոգ. ուղղ. *քաղաք-Յ-ք*)<sup>2</sup>: Որոշ հետազոտողներ էլ հնարավոր են համարում հոգ. հայց. *ս*-ն և հոգ. սեռ.-տր. *ց*-ն նույնպես դիտել իբրև առանձնական (separative)<sup>3</sup> հոգնակերտներ: Այս

<sup>1</sup> Տե՛ս, օրինակ, **Գ. Ջահուկյան**, Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը, Եր., 1959, էջ 93, **Գ. Բ. Джаукян**, Сравнительная грамматика армянского языка, Եր., 1982, էջ 91, **J. Klein**, Classical Armenian Morphology, In: **A. S. Kaye** (ed.), Morphologies of Asia and Africa, Vol. 1, Winona Lake, Indiana, 2007, Ch. 37, էջ 1053, **J. P. T. Clackson**, Classical Armenian, In: **R. D. Woodard** (ed.), The Ancient Languages of Asia Minor, Cambridge University Press, 2008, Ch. 11, էջ 130, **P. Saha**, Classical Armenian declension. // Nordlyd, 2009, Vol. 36, (Special issue on Nanosyntax.), էջ 91-92, **В. А. Плунгян, Кс. П. Семёнова**, К типологии древнеармянской именной парадигматики: Instr. Pl. // Вопросы языкознания, 2016, № 5, էջ 108-109:

<sup>2</sup> Տե՛ս **Ch. de Lamberterie**, Le pluriel en arménien classique. // Faits de langues, 1993, № 2, էջ 161, 166, **A. Donabedian**, De l'arménien classique à l'arménien moderne: typologie, ordre des mots et contact linguistique. // Cahiers de linguistique de l'INALCO, 2000, № 3, էջ 37, **F. Plank**, Split Morphology: How Agglutination and Flexion Mix. // Linguistic Typology 3, 1999, էջ 298:

<sup>3</sup> Հայերենում հաճախ այդ իմաստով գործածվող *մենիմաստ* և դրա հակադիր՝ *բազմիմաստ* եզրույթները չեն հստակեցնում արդյոք այս կամ այն ձևին բնորոշ մեկից ավելի իմաստները իրացվում են միաժամանակ կ, թե՛ այլընտրանքաբար (alternatively): Բայց տիպաբանական տեսանկյունից դա չափազանց կարևոր է: Արդ, *կուտակական* (cumulative) եզրույթը ենթադրում է մեկից ավելի իմաստների միաժամանակյա իրացում տվյալ ձևում, իսկ *առանձնական* (separative/separatist) եզրույթը՝ միայն մեկ իմաստի իրացում յուրաքանչյուր դեպքում: Այդ առումով ավելի նպատակահարմար է հայ. *մենիմաստ* և *բազմիմաստ* տարբերակները կիրառել՝ համապատասխանաբար անգլ. monosemous և polysemous եզրույթների նշանակությամբ, այսինքն՝ այլընտրանքաբար իրացվող իմաստների պարագայում (հմմտ. **E. A. Moravcsik**, Introducing Language Typology, Cambridge University Press, 2013, էջ 113-114):

վերջին տեսակետի համաձայն՝ հոգնակիության կազմիչը ձևույթային տարբերակայնություն է դրսևորում ըստ հոլովածների՝ *-ք, -u, -g*, և երեք դեպքում էլ առանձնական բնույթ ունի<sup>4</sup>: Այսպիսով՝ հին հայերենի հոլովածների կցական կամ թեքական բնույթի վերաբերյալ տարակարծությունները պայմանավորված են այն բանով, թե ինչպես են մեկնաբանվում հարացույցի հոգնակի թվի քերականական ցուցիչները որպես կուտակական հոլովաթվայի՝ և վերջավորություններ, թե՛ առանձնական հոգնակերտներ:

Բայց նախքան հին հայերենի հոլովական վերջավորությունները վերոհիշյալ տեսանկյունից քննության ենթարկելը կուզենայինք նկատել, որ այդ վերջավորությունների համաժամանակյա ձևաբանական վերլուծության հարցում ևս հայերենագիտության մեջ միասնականություն գոյություն չունի: Հայ քերականագիտական ավանդույթը սովորաբար տարբերակում է երկու տիպի հոլովական մասնիկներ՝ հոլովիչներ և հոլովակերտներ: Ըստ այդմ՝ հոլովիչները (*ա, է, ի, ո, ու*) հոլովումների տարբերիչներ են, որոնցով որոշվում է բառերի հոլովական տիպը: Իսկ հոլովակերտները առանձին հոլովածների կազմիչներ են: Հոլովիչը ավելանում է եզակի ուղղականի ձևին կամ վերջից, կամ վերջահանգ երկու բաղաձայնի (բաղաձայնի և ձայնորդի) միջև: Ուստի ըստ հոլովիչի դիրքի տարբերակում են արտաքին (վերջադրական, վերջամասնիկավոր) և ներքին (ներդրական, միջմասնիկավոր) հոլովումներ: Բացի այդ, առանձնացնում են նաև պարզ և խառն հոլովումներ՝ կախված այն բանից՝ արդյոք տվյալ հոլովիչը անփոփոխ պահպանվում է ողջ հարացույցում, թե հերթագայվում է մեկ այլ հոլովիչի հետ<sup>5</sup>: Բայց հոլովակազմության ավանդական նկարագրությունից կարելի է տեսնել, որ հոլովիչները դիտվում են ոչ միայն իբրև հոլովական տիպերի տարբերիչներ, այլև եզակի սեռական-տրականի կազմիչներ: Այսպես, նշվում է, որ եզակի սեռականը և տրականը հիմնականում կազմվում են առանց հոլովակերտի՝ եզակի ուղղականի ձևին հոլովիչի ավելացմամբ: Եվ եթե հաշվի առնենք, որ հոգնակի ուղղականը և հայցականը կազմվում են առանց հոլովիչի՝ համապատասխանաբար *-ք* և *-u* հոլովակերտների ավելացմամբ, և որ մի շարք հոլովներ էլ (օր.՝ եզակի և հոգնակի գործիականը, հոգնակի սեռական-տրական-բացառականը) կազմվում են միաժամանակ թե՛ հոլովիչի և թե՛ հոլովակերտի մասնակցությամբ<sup>6</sup>, ապա կարող է սպավորություն ստեղծվել, թե հոլովիչները և հոլովակերտները հոլովածների կազմության հարցում գրեթե

<sup>4</sup> Տե՛ս **В. А. Плу́гнян, Кс. П. Семёнова**, նշվ. աշխ., հատկապես էջ 109-114:

<sup>5</sup> Տե՛ս, օրինակ, **Ա. Աբրահամյան**, Գրաբարի ձեռնարկ, 4-րդ հրատ., Եր., 1976, էջ 17-24, **Հ. Ավետիսյան, Ռ. Ղազարյան**, Գրաբարի ձեռնարկ, 6-րդ հրատ., Եր., 2007, էջ 47-51: Հմմտ. նաև **Ա. Բագրատունի**, Հայերեն քերականություն ի պետս զարգացելոց Վենետիկ, 1852, էջ 8:

<sup>6</sup> Հմմտ. **Ա. Բագրատունի**, նշվ. աշխ., էջ 8, **Ա. Աբրահամյան**, նշվ. աշխ., էջ 19-24, **Հ. Ավետիսյան, Ռ. Ղազարյան**, նշվ. աշխ., էջ 48-51:

նույնպիսի ձևաբանական դեր ունեն: Այսինքն՝ որոշ հոլովներ կազմվում են միայն հոլովիչով, ուրիշները՝ միայն հոլովակերտով, իսկ որոշ հոլովներ էլ միաժամանակ բնութագրվում են թե՛ հոլովիչի և թե՛ հոլովակերտի առկայությամբ (հմմտ. եզ. ուղղ.-հայց. *բան*, եզ. սեռ.-տր. *բան-ի*, հոգ. ուղղ. *բան-ք*, հոգ. հայց. *բան-ս*, եզ. գործ. *բան-ի-ւ*, հոգ. սեռ.-տր.-բաց. *բան-ի-ց* են): Սակայն այդ տրամաբանությամբ այնքան էլ պարզ չէ, թե հոլովակազմիչ դերը ինչպե՛ս է բաշխվում հոլովիչի և հոլովակերտի միջև վերջիններիս միաժամանակյա առկայության դեպքում: Արդ, թեև հայ քերականագիտության մեջ երկու տիպի հոլովական մասնիկներ են տարբերակվում, սակայն լիովին չի հստակեցվում հոլովիչների ձևաբանական կարգավիճակը հոլովաձևերի կազմության հարցում: Այդ առումով Է. Թումանյանի մոտեցումը որոշ չափով տարբերվում է հայ քերականագիտական ավանդույթից: Նա գտնում է, որ հոլովիչները հիմքային ձայնավորներ են և որպես այդպիսին՝ բառային հիմքից քերականական կամ բառափոխական հիմք են կազմում, որին էլ հենց ավելանում են համապատասխան (հիմնականում թեք հոլովների) թեքույթները: Ըստ այդմ՝ Է. Թումանյանը համաժամանակյա ձևաբանական վերլուծություն կատարելիս հիմքային ձայնավորները հետևողականորեն առանձնացնում է բուն հոլովական վերջավորություններից<sup>7</sup>: Այդուհանդերձ, նա ևս դուրս չի գալիս ավանդական *ներդրական* կամ *միջմասնիկավոր* և *վերջադրական* կամ *վերջամասնիկավոր* եզրույթների ընդհանուր տրամաբանության շրջանակից: Ուստի թե՛ ձայնավորական և թե՛ բաղաձայնական հոլովական տիպերը ձևաբանական վերլուծության է ենթարկում նույն կերպ երկու դեպքում էլ առանձնացնելով հիմքային (թեմատիկ) ձայնավորներ (օր. եզ. սեռ.-տր. *գետ-ո-յ*, *անձ-ի-ն*, *դաս-ե-ք*, հոգ. սեռ.-տր. *գետ-ո-ց*, *գուսան-ա-ց*, *անձ-ա-ն-ց* են), և նշում, որ ձայնավորական և բաղաձայնական տիպերը համաժամանակյա տեսանկյունից միմյանցից տարբերվում են հիմքային ձայնավորի տեղակայման դիրքով<sup>8</sup>: Բայց նկատենք, որ ձայնավորական հոլովական տիպերի դեպքում հիմքակազմությունն իրականացվում է մասնիկավորմամբ, իսկ բաղաձայնական հոլովական տիպերի դեպքում՝ ներքին թեքմամբ: Մյուս կողմից՝ հայտնի է, որ ներքին թեքումը, ի տարբերություն մասնիկավորման, չի կարող հատույթային (սեզմենտային) ձևաբանական վերլուծության ենթարկվել, քանի

<sup>7</sup> Տե՛ս Է. Գ. Կումանյան. Древнеармянский язык. М., 1971, էջ 177-201:

<sup>8</sup> Նույն տեղը, էջ 177-180, նաև՝ էջ 189-191: Պ. Կահան ևս ձայնավորական և բաղաձայնական հոլովական տիպերը հավասարապես հատույթային ձևաբանական վերլուծության է ենթարկում, սակայն վերջինս ելնում է այլ տեսանկյունից և, բացի այդ, հետևողական չէ հիմքային ձայնավորները մասամբ դիտելով որպես հոլովական տիպերը որոշող դասային ցուցիչներ (հմմտ. հոգ. սեռ.-տր.-բաց. *ազգ-ա-ց*, *մաս-ա-ն-ց*, հոգ. գործ. *ազգ-ա-ւ-ք*, *մաս-ա-ւ-ք-ք*), մասամբ էլ՝ որպես հոլովական վերջավորություններ (հմմտ. եզ. սեռ.-տր.-ներգ. *ազգ-ի*, *մաս-ի-ն*) (տե՛ս Բ. Կահ, նշվ. աշխ., էջ 92-93, 101-106):

որ ներքին թեքման հերթագայվող ձայնավորը հիմքի անբաժան մասն է կազմում<sup>9</sup>:

Եվրոպացի հայերենագետները հին հայերենի հոլովական համակարգը դիտարկելիս սովորաբար առանձին հոլովիչ ձայնավորներ չեն տարբերակում՝ դրանք համարելով կա՛մ հիմքի, կա՛մ էլ վերջավորությունների բաղկացուցիչ մաս: Ընդ որում՝ հաճախ հենց նույն հեղինակը այդ հարցում որոշակի անհետևողականություն կամ երկվություն է դրսևորում: Այսպես, Ա. Մեյեն հին հայերենի հոլովական վերջավորությունները նկարագրելիս նշում է միայն բուն վերջավորությունները (*-ք, -ւ, -ւ/-ք, -ց, -լք* են)<sup>10</sup>՝ առանց հիմքային ձայնավորների, իսկ բերվող հարացույցային օրինակներում վերջավորությունները հիմքից չի առանձնացնում<sup>10</sup>: Բայց մյուս կողմից՝ նա գտնում է, որ երբեմնի հիմքային ձայնավորները հին հայերենում համաժամանակյա տեսանկյունից այլևս չեն գիտակցվում որպես այդպիսին և վերջավորությունների բաղկացուցիչ մաս են կազմում: Ուստի իր մեկ այլ աշխատության մեջ նա հիմքային ձայնավորները բուն վերջավորությունների հետ որպես մեկ միասնական ձևաբանական տարր առանձնացնում է հոլովական հիմքից՝ *-ոյ, -ով* են<sup>11</sup>: Հ. Յենսենը նույնպես, ըստ էության, հիմքային ձայնավորը և բուն վերջավորությունը համաժամանակյա տեսանկյունից դիտում է որպես մեկ միասնական ձևաբանական տարր, իսկ հարացույցային օրինակներում վերջավորությունները բառահիմքից չի առանձնացնում<sup>12</sup>: Ջ. Քլեքսոնը իբրև հոլովական ցուցիչներ առանձնացնում է բուն վերջավորությունները (եզ. գործ. *-w/-v/-b*, հոգ. գործ. *-wk<sup>c</sup>/-vk<sup>c</sup>/-bk<sup>c</sup>*, հոգ. ուղղ. *-k<sup>c</sup>*, հոգ. սեռ. *-տր. -բաց. -c<sup>c</sup>* են) և նշում, որ գործիականի և հոգնակի սեռական-տրական-բացառականի հոլովական ցուցիչներին նախորդում է *a* (ա), *i* (ի), *o* (ո) կամ *ow* (ու) հիմքային ձայնավորը, բայց մյուս կողմից՝ գործիական հոլովի կազմության կցական բնույթը *ji* (ձի) բառի օրինակով լուսաբանելիս եզ. գործ. *ji-ov* (ձի-ով) և հոգ. գործ. *ji-ov-k<sup>c</sup>* (ձի-ով-ք) ձևերում գործիական հոլովի ցուցիչ է համարում *-ov* (*-ով*)-ը, այսինքն՝ վերջավորությունը հիմքային ձայնավորի հետ միասին<sup>13</sup>: Ուստի այդ պարագայում այնքան էլ պարզ չէ՝ նա բուն վերջավորություններին նախորդող *a* (ա), *i* (ի), *o* (ո), *ow* (ու) ձայնավորները իբրև հիմքային ձայնավորներ բնորոշելիս ելնում է տարածամանակյա՞, թե՞ հին հայերենի համաժամանակյա տեսանկյունից: Նույնպիսի անորոշություն և երկվություն է դրսևորում նաև Յ. Քլայնը: Վերջինս նշում է, որ բոլոր չորս ձայնավորական կամ անփոփոխ հիմ-

<sup>9</sup> Տե՛ս **M. Aronoff, K. Fudeman**, *What is Morphology?*, 2<sup>nd</sup> ed., Wiley-Blackwell, 2011, էջ 16-17, նաև՝ էջ 49-54:

<sup>10</sup> Տե՛ս **A. Meillet**, *Altarmenisches Elementarbuch*, Heidelberg, 1913, էջ 44-50:

<sup>11</sup> Տե՛ս **A. Meillet**, *Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique*, 2<sup>nd</sup> éd., Vienne, 1936, էջ 68, նաև՝ էջ 66-ի հարացույցային օրինակները:

<sup>12</sup> Տե՛ս **H. Jensen**, *Altarmenische Grammatik*, Heidelberg, 1959, էջ 48 հաջ.:

<sup>13</sup> Տե՛ս **J. P. T. Clackson**, նշվ. աշխ., էջ 130-132:

քով հոլովական տիպերի եզակի ու հոգնակի գործիականում և հոգնակի սեռական-տրական-բացառականում բուն վերջավորությունից առաջ հանդես է գալիս հիմքային ձայնավորը, մյուս կողմից՝ ընդունում է, որ նախագրային հայերենում հիմքային վանկերը (stem syllables) վերաքերականացվել են՝ դառնալով հոլովական վերջավորություններ<sup>14</sup>: Յ. Մացինգերը ևս հետևողական չէ հոլովաձևերի համաժամանակյա ձևաբանական վերլուծության և հ.-ե. հիմքային ձայնավորների հինհայերենյան կարգավիճակի նկարագրման հարցում<sup>15</sup>: Ռ. Գոդելը գտնում է, որ երբեմնի հիմքային ձայնավորները, որոնք հին հայերենում հանդես են գալիս միայն թեք հոլովաձևերում, վերաիմաստավորվել և վերջավորությունների բաղկացուցիչ մաս են կազմում: Ուստի նա հետևողականորեն ձայնավորական կամ անփոփոխ հիմքով հոլովական տիպերի հիմքային ձայնավորները բուն վերջավորությունների հետ որպես մեկ միասնական ձևաբանական տարր առանձնացնում է հոլովական հիմքից<sup>16</sup>: Այդուհանդերձ, Ռ. Գոդելը անհետևողականություն է ցուցաբերում հոլովական հիմքերի նկարագրման հարցում, քանի որ ձայնավորական հիմքով հոլովական տիպերի հարացույցում առանձնացնում է մեկ ընդհանուր և անփոփոխ հոլովական հիմք, որը ձևով համընկնում է եզակի ուղղական-հայցականին: Մինչդեռ բաղաձայնական հիմքով հոլովական տիպերի դեպքում նշում է, որ հարացույցային ձևերը կազմվում են տարբեր հիմքերից, և համապատասխանաբար հիմքային տարբերակներ է առանձնացնում<sup>17</sup>: Կարծում ենք՝ ձևաբանական վերլուծության ընդհանուր սկզբունքներից<sup>18</sup> ելնելով՝ անհրաժեշտ է մեկից ավելի հոլովական հիմքեր (ուղիղ և թեք հիմքային տարբերակներ) առանձնացնել հին հայերենի թե՛ բաղաձայնական և թե՛ ձայնավորական հոլովական տիպերի դեպքում (տե՛ս ստորև)<sup>19</sup>: Նշենք, որ բազմահիմքությունը բնորոշ է աշխարհի մի շարք (այդ թվում՝ դադստանյան և դրավիդյան) լեզուների հոլովական համակարգերին: Հատկապես դադստանյան լեզուները այժմ են ընկնում բազմահիմքության և հոլովական հարացույցների կազմության տարատիպ օրինաչափություններով: Որպես բացարձակ կամ ուղղական հոլով հանդես

<sup>14</sup> Տե՛ս **J. Klein**, նշվ. աշխ., էջ 1052-1053:

<sup>15</sup> Հմմտ. **J. Matzinger**, Untersuchungen zum altarmenischen Nomen: Die Flexion des Substantivs, J. H. Röhl GmbH, Dettelbach, 2005, էջ 12, 14, 21:

<sup>16</sup> Տե՛ս **R. Godel**, An Introduction to the Study of Classical Armenian, Wiesbaden, 1975, էջ 93, նաև էջ 28-30-ի հոլովական հարացույցները: Հարցին մոտավորապես նույն կերպ է մոտենում նաև Ռ. Շմիթը (տե՛ս **R. Schmitt**, Grammatik des Klassisch-Armenischen mit sprachvergleichenden Erläuterungen, 2., durchgesehene Auflage, Innsbruck, 2007, էջ 109, նաև էջ 93-97-ի հարացույցային օրինակները):

<sup>17</sup> Տե՛ս **R. Godel**, նշվ. աշխ., էջ 28-32:

<sup>18</sup> Տե՛ս **E. A. Nida**, Morphology: The Descriptive Analysis of Words, 2<sup>nd</sup> ed., Ann Arbor · University of Michigan Press, 1949, **M. Aronoff**, **K. Fudeman**, նշվ. աշխ., էջ 12-22:

<sup>19</sup> Հմմտ. նաև **В. А. Плуинян, Кс. П. Семёнова**, նշվ. աշխ., էջ 110-111 և **М. Е. Алексеев**, Сравнительно-историческая морфология нахско-дагестанских языков. Категории имени, М., 2003, էջ 34:

եկող ուղիղ հիմքին հակադրվող թեք հիմքերը մասամբ գործառուում են միայն բուն հոլովական հիմքի արժեքով, մասամբ էլ ձևով համընկնում են այս կամ այն թեք հոլովին (սովորաբար էրգատիվին կամ սեռականին), այսինքն՝ վերջին դեպքում թեք հիմքերը երկակի (հոլովական հիմքի և այս կամ այն հոլովաձևի) դեր են կատարում: Թեք հիմքերը հիմնականում կազմվում են ուղիղ հիմքին համապատասխան հիմքակազմիչ մասնիկների ավելացմամբ, երբեմն էլ՝ ուղիղ հիմքի ձևահնչույթային հերթագայությամբ: Իսկ թեք հոլովաձևերը ընդհանուր առմամբ կազմվում են թեք հիմք(եր)ից, բայց մասամբ էլ՝ անմիջականորեն ուղիղ հիմքից<sup>20</sup>:

Արդ, եթե փորձենք ասվածի լույսի ներքո ընդհանրացված բնութագրել հին հայերենի հոլովական հարացույցները, ապա կարող ենք ասել հետևյալը: Ձայնավորական հիմքով պարզ հոլովումներին բնորոշ է երկու (մեկ ուղիղ և մեկ թեք), իսկ խառն հոլովումներին՝ երեք (մեկ ուղիղ և երկու թեք) հիմքային տարբերակ. հմմտ. մի կողմից՝ եզ. ուղղ.-հայց. *բան-Օ*, հոգ. ուղղ. *բան-ք*, հոգ. հայց. *բան-ու*, եզ. սեռ.-տր. *բան-ի-Օ*, եզ. գործ. *բան-ի-լ*, հոգ. սեռ.-տր.-բաց. *բան-ի-ց*, հոգ. գործ. *բան-ի-լ-ք*, եզ. ուղղ.-հայց. *գետ-Օ*, հոգ. ուղղ. *գետ-ք*, հոգ. հայց. *գետ-ու*, եզ. սեռ.-տր. *գետ-ն-յ*, եզ. գործ. *գետ-ն-վ*, հոգ. սեռ.-տր.-բաց. *գետ-ն-ց*, հոգ. գործ. *գետ-ն-վ-ք* ևն (ուղիղ *բան-*, *գետ-* և թեք *բան-ի-*, *գետ-ն-* հիմքերով), մյուս կողմից՝ եզ. ուղղ.-հայց. *քաղաք-Օ*, հոգ. ուղղ. *քաղաք-ք*, հոգ. հայց. *քաղաք-ու*, եզ. սեռ.-տր. *քաղաք-ի-Օ*, եզ. գործ. *քաղաք-ա-լ*, հոգ. սեռ.-տր.-բաց. *քաղաք-ա-ց*, հոգ. գործ. *քաղաք-ա-լ-ք* ևն (ուղիղ *քաղաք-* և թեք *քաղաք-ի-*, *քաղաք-ա-* հիմքերով): Թեև *քաղաք-ի-* թեք հիմքը փաստացիորեն հանդես է գալիս միայն եզակի սեռական-տրականում, այդուհանդերձ *-ի-*ն դարձյալ պետք է դիտել իբրև հիմքակազմիչ մասնիկ, այլ ոչ թե եզակի սեռական-տրականի վերջավորություն: Կարծում ենք՝ այդօրինակ ձևաբանական վերլուծությունը արդարացված է երկու առումով: Նախ՝ որոշ հոլովական տիպերի դեպքում եզակի սեռական-տրականը ևս մյուս թեք հոլովաձևերի նման հիմքակազմիչ մասնիկից հետո հատուկ հոլովական վերջավորություն ունի (հմմտ. եզ. սեռ.-տր. *գետ-ն-յ*)<sup>21</sup>: Եվ երկրորդ՝ հոլովական տարբեր տիպերի ձևաբանական վեր-

<sup>20</sup> Տե՛ս **M. Daniel and D. Ganenkov**, Case Marking in Daghestanian: Limits of Elaboration, In: **A. Malchukov, A. Spencer** (eds.), The Oxford Handbook of Case, Oxford University Press, 2008, Ch. 46, էջ 668-685, **A. E. Kibrik**, Organising Principles for Nominal Paradigms in Daghestanian Languages: Comparative and Typological Observations, In: **F. Plank** (ed.), Paradigms: The Economy of Inflection, Berlin · New York, 1991, էջ 255-274, **B. Comrie and M. Polinsky**, The Great Daghestanian Case Hoax, In: **A. Siewierska, J. J. Song** (eds.), Case, Typology and Grammar: In Honor of Barry J. Blake, Amsterdam/Philadelphia, 1998, էջ 95-114, **M. E. Алексеев**, նշվ. աշխ., էջ 30-82: Հմմտ. նաև **Bh. Krishnamurti**, The Dravidian Languages, Cambridge University Press, 2003, էջ 28, 218 հաջ., **S. B. Steever** (ed.), The Dravidian Languages, Routledge: London and New York, 1998:

<sup>21</sup> Բառավերջի *յ-*ն, որը նախագրային հայերենում ընկել էր *ի* և *ու* ձայնավորներին հաջորդող դիրքում (իսկ *ա-ից* հետո *յ-ի* առկայության հարցում հին ձեռագրերում հաճախ տատանումներ են նկատվում), *ն-*ին հաջորդող դիրքում դեռ օրինաչափորեն

լուծությունը ցույց է տալիս, որ հին հայերենի հոլովակազմության ընդհանուր սկզբունքի համաձայն՝ ձայնավորական հիմքով հոլովական տիպերի եզակի սեռական-տրականը, եզակի ու հոգնակի գործիականը և հոգնակի սեռական-տրական-բացառականը կանոնավորապես բնութագրվում են ուղիղ հիմքին անմիջականորեն ավելացող թեք հիմքակազմիչ ձայնավորի առկայությամբ (իսկ վերջինիս հաջորդում են բուն վերջավորությունները, այդ թվում՝ գրոյական վերջավորությունը): Ըստ այդմ՝ թե՛ եզ. սեռ.-տր. *բան-ի-Յ* և թե՛ եզ. սեռ.-տր. *քաղաք-ի-Յ* ձևերում գործ ունենք միևնույն հիմքակազմիչ *-ի-* մասնիկի հետ, իսկ եզակի սեռական-տրականի իմաստը երկու դեպքում էլ արտահայտվում է գրոյական վերջավորությամբ: Ինչ վերաբերում է բաղաձայնական հիմքով հոլովական տիպերին, վերջիններս հանդես են բերում երկու (*դուստր-//դստեր-*), երեք (*անձն-//անձին-//անձան-*, *ձուկն-//ձկան-//ձկուն-*) և չորս (*հարսն-//հարսին-//հարսան-//հարսուն-*) հիմքային տարբերակներ<sup>22</sup>: Ի դեպ, հին հայերենում հոլովական տարբեր տիպերի առկայությունը պայմանավորված է ոչ այնքան հոլովական վերջավորությունների բազմազանությամբ, որքան հոլովական հիմքերի կազմության և հիմքային տարբերակների փոխհարաբերության տարատիպ օրինաչափություններով<sup>23</sup>: Իհարկե, եզակի թվում վերջավորությունների որոշակի տարբերակայնություն է նկատվում, բայց հոգնակիում միասնական վերջավորություններ են առկա բոլոր հոլովական տիպերի դեպքում, եթե հաշվի չառնենք գործիականի առանձնական վերջավորության տարբերակայնությունը (*ւ/վ/ք*), որը, բնականաբար, բնորոշ է թե՛ եզակիին և թե՛ հոգնակիին<sup>24</sup>:

Ինչպես վերը տեսանք, հին հայերենի անվանական հոլովաձևերի կազմության թեքական կամ կցական բնույթի հարցում հիմնական տարակարծությունը ուղղակիորեն առնչվում է առանձնականության-կուտակականության հարաչափին: Ուստի ստորև բուն քննությունը կկատարենք այդ տեսանկյունից, իսկ մյուս հարաչափերը նկատի կառնվեն միայն ըստ անհրաժեշտության: Բայց մինչ այդ հարկ ենք համարում ներկայացնել կցականության և թեքականության առավել կարևոր հարաչափերը:

1) Կցականությանը բնորոշ են կցող առանձնական մասնիկներ, իսկ թեքականությանը՝ կուտակական թեքույթներ:

2) Կցականությունը բնութագրվում է հիմքի և մասնիկների անփո-

պահպանվում է դասական հայերենում, այն է՝ V դ. գրաբարում (տե՛ս **A. Meillet**, *Esquisse...*, էջ 57), և համեմատաբար ավելի ուշ (VI-VII դդ.) է *n*-ից հետո ևս *j*-ի անկում արձանագրվում (տե՛ս **Ն. Մուրադյան**, Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. I, Հնչյունաբանություն, Եր., 1982, էջ 64):

<sup>22</sup> Բաղաձայնական հիմքով հոլովական տիպերի հիմքային տարբերակների բաշխումային օրինաչափությունների մասին տե՛ս **R. Godel**, նշվ. աշխ., էջ 30-32:

<sup>23</sup> Տե՛ս **Յ. Գ. Туманян**, նշվ. աշխ., էջ 177-179:

<sup>24</sup> Հմտ. **A. Meillet**, *Altarmenisches...*, էջ 45, **J. P. T. Clackson**, նշվ. աշխ., էջ 131:

փոխակայնությամբ, իսկ թեքականությունը՝ տարբերակայնությամբ: Որոշ լեզվաբաններ առանձնացնում են ձևահնչույթային հերթագայություն (morphophonological alternation) և տարածնությունային տարբերակայնություն (suppletion): Մի կողմից տարբերակում են հիմքային հերթագայություն (stem alternation) և տարահիմքություն (stem suppletion), մյուս կողմից՝ մասնիկային հերթագայություն (affix alternation) և տարամասնիկություն (affix suppletion)<sup>25</sup>: Մինչդեռ այլ հետազոտողներ հիմքային հերթագայությունը և տարահիմքությունը միավորում են *հիմքային տարբերակայնություն* (stem variation), իսկ մասնիկային հերթագայությունը և տարամասնիկությունը՝ *մասնիկային տարբերակայնություն* (affix variation) անվանումների տակ<sup>26</sup>: Իրականում հերթագայվող տարբերակների նույնական կամ տարբեր ծագումը համաժամանակյա տեսանկյունից ոչ միշտ կարող է տարբերակման հստակ և ճիշտ չափանիշ լինել: Այսպես, հին հայերենի գործիական հոլովի *ւ* և *բ* կազմիչները ծագմամբ հ. -ե. \**-bʰi-(s)* ձևայթի ենթաձևությունային տարբերակներն են, բայց նրանց ձևահնչույթային կապը հին հայերենում արդեն չի գիտակցվում: Հետևաբար հ. հայ. *ւ/բ* տարբերակայնությունը ոչ թե մասնիկային հերթագայություն, այլ տարամասնիկություն է: Բացի այդ, պետք է նկատի ունենալ, որ թե՛ նույնաձագում և թե՛ տարածագում բառայնացված (lexicalized) և/կամ քերականացված (grammaticalized) ձևությունային տարբերակայնությունը ըստ էության իրականացնում է համաժամանակյա ձևաբանական նույնատիպ գործառույթ:

3) Կցական հարացույցային ձևերը ունեն հստակ տարբերակվածություն, մինչդեռ թեքական հարացույցային ձևերի սինկրետիզմը հաճախադեպ երևույթ է:

4) Կցականության դեպքում ոչ նշույթավորված ձևը (օր.՝ եզակի ուղղական կամ բացարձակ հոլովը) գրեթե միշտ ունենում է զրոյական վերջավորություն, իսկ թեքականության դեպքում այդ երևույթը նկատելի է կա՛մ միայն երբեմն, կա՛մ էլ երբեք:

5) Կցականությանը բնորոշ է միայն տեղային արտահայտողականություն (local exponence), այսինքն՝ տվյալ քերականական իմաստը դրսևորվում է միշտ մեկ ձևաբանական տարրի սահմաններում, մինչդեռ թեքականության դեպքում կարող է լինել նաև ընդլայնված արտահայտողականություն (extended exponence), երբ տվյալ իմաստի արտահայտմանը մասնակցում են մեկից ավելի ձևաբանական տարրեր, օր.՝ հիմքի ձևափոխությունը (հերթագայությունը) և մասնիկավորումը միաժամանակ:

<sup>25</sup> St և M. Haspelmath, An Empirical Test of the Agglutination Hypothesis, In: S. Scalise, E. Magni, A. Bisetto (eds.), Universals of Language Today, Springer, 2009, էջ 17-18:

<sup>26</sup> St և V. A. Plungian, Agglutination and Flexion, In: M. Haspelmath, E. König, W. Oesterreicher and W. Raible (eds.), Language Typology and Language Universals: An International Handbook, Vol. 1, Berlin · New York, 2001, էջ 670-672:



6) Կցականության դեպքում հիմքի և վերջավորության միացման սահմանագծում սովորաբար ձուլում տեղի չի ունենում, և հնարավոր է ձևույթների ուղղագիծ բաժանում: Մինչդեռ թեքականությունը ենթադրում է ձևույթների ավելի սերտ հնչյունական միակցում և հաճախ հիմքի ու վերջավորության սահմանային տարրերի ձուլում<sup>27</sup>:

Իհարկե, թվարկված հարաչափերի միջև պարտադիր փոխկախվածություն գոյություն չունի, և դրանք սկզբունքորեն կարող են գործել մեկը մյուսից անկախ և տարբեր չափով, թեև նկատելի են հարաբերակցության որոշակի միտումներ<sup>28</sup>: Ուստի լեզվաբանական տիպաբանության արդի փուլում կցականության և թեքականության բնորոշման ու տարբերակման հարցում գործնականում հաճախ նկատի է առնվում երկու (կամ երեք) հարաչափ, հիմնականում՝ առանձնականություն-կուտակականությունը (*separation vs. cumulation*) և անփոփոխակայ-նություն-տարբերակայնությունը (*invariance vs. variation*)<sup>29</sup>: Իսկ եթե հաշվի են առնվում նաև այլ հարաչափեր, դարձյալ այդ երկու հարաչափերը դիտվում են իբրև առանցքային և առավել կարևոր<sup>30</sup>: Նկատենք, որ նույնիսկ մեկ հարաչափի սահմաններում այս կամ այն լեզուն կարող է ունենալ միաժամանակ թե՛ կցական և թե՛ թեքական հատկանիշներ, ընդ որում՝ հաճախ նույն քերականական տիրույթում կամ միևնույն հարացույցի ներսում: Այսինքն՝ հարացույցի ձևերից մեկը կամ որոշները կարող են կազմված լինել կցական, իսկ մյուսները՝ թեքական սկզբունքով<sup>31</sup>: Ֆ. Պլանկը նույն լեզվի հարաբերակից քերականական ձևերի և հարացույցների այդպիսի երկակի կառուցվածքային դրությունը բնորոշում է որպես երկատված ձևաբանություն (*split morphology*)<sup>32</sup>:

Այդ առումով կասկածից վեր է, որ հին հայերենի գործիական հոլովը կազմվում է կցական եղանակով՝ բառահիմքին հոլովանիշ և թվանիշ առանձնական վերջավորությունների կցմամբ: Այն հանգամանքը, որ գործիականի միևնույն (ւ/վ/բ) կազմիչը հանդես է գալիս թե՛ եզակիում և թե՛ հոգնակիում, և որ հոգնակի գործիականը կազմվում է եզակի գործիականի ձևին *ք* ձևույթի ավելացմամբ, անառարկելիորեն վկայում է ինչպես (ւ/վ/բ) հոլովանիշ, այնպես էլ *ք* հոգնակերտ ձևույթների

<sup>27</sup> Այս և այլ հարաչափերի մասին հանգամանորեն տե՛ս **F. Plank**, *Split Morphology...*, էջ 281-284: Հմտ. նաև **M. Haspelmath**, նշվ. աշխ., էջ 15-18 և էջ 18՝ տողատակ:

<sup>28</sup> Տե՛ս **F. Plank**, նշվ. աշխ., հատկապես՝ էջ 284 հաջ., **I. Igartua**, *From Cumulative to Separative Exponence in Inflection: Reversing the Morphological Cycle*. // *Language*, 2015, Vol. 91, № 3, էջ 279 հաջ.: Հմտ. նաև **M. Haspelmath**, նշվ. աշխ., էջ 13-27, **V. A. Plungian**, նշվ. աշխ., էջ 673:

<sup>29</sup> Տե՛ս **F. Plank**, նշվ. աշխ., էջ 286 հաջ., **M. Haspelmath**, նշվ. աշխ., էջ 18 հաջ.: Հմտ. նաև **V. A. Plungian**, նշվ. աշխ., էջ 669-673, **I. Igartua**, նշվ. աշխ., էջ 681 հաջ.:

<sup>30</sup> Տե՛ս **I. Igartua**, նշվ. աշխ., էջ 681-685, նաև **F. Plank**, նշվ. աշխ., էջ 279-286:

<sup>31</sup> Տարբեր լեզուներից համապատասխան օրինակների համար տե՛ս **F. Plank**, նշվ. աշխ., հատկապես՝ էջ 286-318: Հմտ. նաև **I. Igartua**, նշվ. աշխ., էջ 680:

<sup>32</sup> Տե՛ս **F. Plank**, նշվ. աշխ., էջ 279-340:

առանձնական բնույթի մասին: Մյուս կողմից, եթե հաշվի առնենք, որ նույն *ք* ձևույթը առկա է նաև հոգնակի ուղղականում, և որ վերջինս կազմվում է եզակի ուղղականից՝ դարձյալ *ք* ձևույթի ավելացմամբ, ապա հոգն. ուղղ. *ք*-ն ևս կարծես թե կարող է դիտվել իբրև առանձնական հոգնակերտ գոնե ձայնավորական (և որոշ բաղաձայնական) հոլովական տիպերի դեպքում, որոնց հոգնակի ուղղականի հիմքը ձևով համընկնում է եզակի ուղղականին. հմմտ. եզ. ուղղ. *գետ, սիրտ, ժամ, շուն, անկիւն, սիւն* և հոգ. ուղղ. *գետ-ք, սիրտ-ք, ժամ-ք, շուն-ք, անկիւն-ք, սիւն-ք* ևն: Բայց իրականում այն փաստը, որ ուղղական հոլովի իմաստը թե՛ եզակիում և թե՛ հոգնակիում բացահայտ արտահայտացուցիչ (overt exponent) չունի, և որ հոգնակի ուղղականը կազմվում է եզակի ուղղականին *ք* ձևույթի ավելացմամբ, սկզբունքորեն հնարավոր է դարձնում *ք* ձևույթի երկակի մեկնաբանությունը. որպես առանձնական հոգնակերտ կամ կուտակական հոլովաթվային ցուցիչ<sup>33</sup>: Բնարկե, նույն *ք* ձևույթի առկայությունը նաև հոգնակի գործիականում (որտեղ *ք*-ն միանշանակ առանձնական հոգնակերտ է) լրացուցիչ փաստարկ է հոգ. ուղղ. *ք* ձևույթի առանձնական բնույթի օգտին: Մակայն այս վերջին հանգամանքն էլ ինքնին վերցրած չի կարող իբրև հոգ. ուղղ. *ք* ձևույթի առանձնականության անհերքելի ապացույց դիտվել, քանի որ հարացույցում միևնույն ձևույթը սկզբունքորեն կարող է հանդես գալ մի դեպքում իբրև առանձնական, իսկ մեկ այլ դեպքում՝ իբրև կուտակական ցուցիչ: Դա լավագույնս հաստատվում է, ասենք, թուրքերենի բայական առաջին կարգի *-iz* դիմաթվային ածանցի (մասնիկի) օրինակով: Վերջինս հոգ. I դ. ձևում կուտակական դիմաթվային ցուցիչ է (հմմտ. եզ. I դ. *-im*, հոգ. I դ. *-iz*), մինչդեռ հոգ. II դ. ձևում՝ առանձնական հոգնակերտ, եթե հաշվի առնենք վերջին դեպքում նաև *-sin* առանձնական դիմաթվային ցուցիչի միաժամանակյա առկայությունը հոգ. II դ. ձևում (հմմտ. եզ. II դ. *-sin*, հոգ. II դ. *-sin-iz*)<sup>34</sup>: Հետևաբար գրք. *ք* ձևույթը նույնպես սկզբունքորեն կարող էր հարացույցում մի դեպքում (հոգնակի գործիականում) առանձնական, իսկ մեկ այլ դեպքում (հոգնակի ուղղականում) կուտակական բնույթ ունենալ: Մյուս կողմից՝ նկատենք, որ հին հայերենի հոլովական հարացույցի եզակի և հոգնակի ձևերում գործում են սինկրետիզմի տարբեր օրինաչափություններ: Եզակիում ուղղականը բոլոր հոլովական տիպերի դեպքում ձևով համընկնում է հայցականին, իսկ որոշ հոլովական տիպերի դեպքում՝ նաև ներգոյականին, մինչդեռ հոգնակիում ուղղականը ձևով տարբերվում է բոլոր հոլովներից, այդ թվում՝ հայցական-ներգոյականից և, ըստ այդմ, միայն հոգնակի ուղղականի իմաստ է արտահայտում: Արդ, քանի որ եզակի ուղղական-հայցականին կամ եզակի ուղղական-հայցական-ներգոյա-

<sup>33</sup> Տարբեր լեզուների նմանօրինակ դեպքերի հնարավոր երկակի մեկնաբանության համար տե՛ս **F. Plank**, նշվ. աշխ., էջ 293-298:

<sup>34</sup> Հմմտ. **F. Plank**, նշվ. աշխ., էջ 287-288:

կանին *ք* ձևույթի ավելացումը առաջացնում է ոչ միայն քանակական (թվի), այլև որոշակի հոլովական իմաստային փոփոխություն, դրանից անխուսափելիորեն հետևում է, որ հոգ. ուղղ. *ք* ձևույթը կուտակական հոլովաթվային կազմիչ է: Վերջինիս կուտակական բնույթը առավել ևս ակնհայտ է բաղաձայնական հոլովական տիպերի դեպքում, որոնց հոգնակի ուղղականի հիմքը չի համընկնում եզակի ուղղականի ձևին (հմմտ. եզ. ուղղ. *անձն, հարսն, շուրթն, դուստր* և հոգ. ուղղ. *անձին-ք, հարսուն-ք, շրթուն-ք, դստեր-ք*): Այն հանգամանքը, որ հոգ. ուղղ. *ք*-ից զուրկ *անձին-, հարսուն-, շրթուն-, դստեր-* հիմքերին չի կարող ուղղական հոլովի իմաստ վերագրվել<sup>35</sup>, անառարկելիորեն ցույց է տալիս, որ *ք*-ն միաժամանակ թե՛ հոգնակիության և թե՛ ուղղականի կուտակական ցուցիչ է: Կուտակական բնույթ ունի նաև հոլովական հիմքի ներքին թեքումը, որը հոգնակիության և ուղղական հոլովի իմաստների արտահայտման հարցում օժանդակ դեր է խաղում: Այսինքն՝ թե՛ հոլովի և թե՛ թվի իմաստները բաղաձայնական հիմքով հոլովական տիպերի դեպքում բնութագրվում են կուտակական և ընդլայնված արտահայտողականությամբ՝ դրսևորվելով երկու ձևաբանական տարրի (*ք* ձևույթի և հերթագայվող հիմքի) սահմաններում: Ասվածից հետևում է, որ *ք* ձևույթը թե՛ բաղաձայնական և թե՛ ձայնավորական հոլովական տիպերի հոգնակի գործիականում առանձնական հոգնակերտ է, իսկ հոգնակի ուղղականում՝ կուտակական հոլովաթվային կազմիչ:

Ինչ վերաբերում է հոգ. հայց.-ներգ. *-u* և հոգ. սեռ.-տր.-բաց. *-g* ցուցիչների ենթադրյալ առանձնական բնույթին, այդ տեսակետը ևս առարկություն է հարուցում: Բանն այն է, որ սինկրետիզմի տարատիպ օրինաչափություններ են գործում նաև հոգ. հայց.-ներգ. *-u* և հոգ. սեռ.-տր.-բաց. *-g* կազմիչների պարագայում, ընդ որում՝ ինչպես միննույն հոլովական տիպի եզակիում և հոգնակիում, այնպես էլ տարբեր հոլովական տիպերի դեպքում: Հետևաբար *-u* և *-g* ցուցիչների ավելացումը եզակի թվի համապատասխան ձևին դարձյալ միաժամանակ հոլովաթվային իմաստային փոփոխություն է առաջացնում: Այսպես, եզակիում հայցականը բոլոր հոլովական տիպերի դեպքում ձևով համընկնում է ուղղականին, իսկ որոշ հոլովական տիպերի (օր.՝ *Ո* պարզ հոլովման) պարագայում՝ նաև ներգոյականին, մինչդեռ հոգնակիում հայցականը միշտ ձևով համընկնում է ներգոյականին, բայց տարբեր է ուղղականից: Նմանապես եզակիում սեռական-տրականը հոլովական տիպերի մեծ մասի դեպքում ձևով համընկնում է ներգոյականին և տարբեր է բացառականից: Մինչդեռ հոգնակիում սեռական-տրականը և բացառականը մեկ ընդհանուր ձև են հանդես բերում բոլոր հոլովական տիպերի դեպքում՝ տարբերվելով մնացած հոլովաձևերից, այդ թվում՝ ներ-

<sup>35</sup> Ի դեպ, համաժամանակյա-նկարագրական տեսանկյունից հոգնակի ուղղականի՝ *ք*-ից զուրկ հիմքը որոշ հոլովական տիպերի դեպքում ձևով համընկնում է եզակի սեռական-տրական-ներգոյականին:

գոյականից: Սեռական-տրականը և բացառականը թե՛ եզակիում և թե՛ հոգնակիում ձևով համընկնում են միայն **Ո** և **Ա** պարզ հոլովումների պարագայում: Բայց այս դեպքում էլ հոգ. սեռ.-տր.-բաց. *-g* ձևույթը ակնհայտորեն կուտակական հոլովաթվային կազմիչ է, քանի որ եզակի սեռական-տրական-բացառականում դրան հակադրվում է մեկ այլ կուտակական հոլովաթվային կազմիչ՝ *-j*-ն. հմմտ. եզ. սեռ.-տր.-բաց. *գետ-n-j* և հոգ. սեռ.-տր.-բաց. *գետ-n-g*: Նշենք նաև, որ թեև հայ քերականագետները, ի տարբերություն եվրոպացի հայերենագետների, հին հայերենի համար սովորաբար առանձին ներգոյական հոլով չեն տարբերակում, սակայն վերջինս եզակիում որոշակի հոլովական տիպերի դեպքում ինքնուրույն ձև է հանդես բերում<sup>36</sup>: Ուշագրավ է, որ նույնիսկ ինքնուրույն ներգոյական հոլով չընդունող քերականագետները խոստովանում են, որ մի խումբ բառերի եզակի տրականի (իրականում՝ ներգոյականի – Ս. Ա.) *-ջ* և *-ուլ* հոլովակերտ մասնիկները հանդես են գալիս «մանավանդ *ի* նախդրի հետ գործածվելիս (ներգոյականի իմաստով)»<sup>37</sup>: Մյուս կողմից՝ հայտնի է, որ անհրաժեշտ է առանձին հոլով տարբերակել նաև ինքնուրույն ձևի բացակայության դեպքում, եթե տարբեր հարացույցներում գործում են սինկրետիզմի տարբեր օրինաչափություններ, և տվյալ իմաստ արտահայտող ձևը համընկնում է ոչ թե միշտ նույն, այլ տարբեր հոլովաձևերի հետ<sup>38</sup>: Արդ, հին հայերենի ներգոյականը, հոգնակիում միշտ ձևով համընկնելով հայցականին, եզակիում տարբեր հոլովական տիպերի դեպքում նման է կա՛մ տրականին, կա՛մ հայցականին, իսկ **Ո** հոլովման դեպքում մասամբ համընկնում է եզակի հայցականին, մասամբ էլ ստանում է սեռական-տրականից տարբեր *ի* կազմիչ<sup>39</sup>:

Այսպիսով՝ վերը կատարված քննության արդյունքները կարելի է ամփոփել հետևյալ կերպ: Գրբ. *ք* ձևույթը առանձնական հոգնակերտ է միայն հոգնակի գործիականում, մինչդեռ հոգնակի ուղղականում կուտակական հոլովաթվային ցուցիչ է թե՛ բաղաձայնական և թե՛ ձայնավորական հոլովական տիպերի դեպքում: Թեև եզակի ուղղականի գրոյական վերջավորությունը կցականությանը բնորոշ երևույթ է, այդուհանդերձ եզակիում և հոգնակիում գործող սինկրետիզմի ոչ նույնական (տարատիպ) օրինաչափությունները անխուսափելիորեն կուտակական (հետևաբար նաև թեքական) բնույթ են ապահովում հոգ. ուղղ. *ք*

<sup>36</sup> Տե՛ս **R. Godel**, նշվ. աշխ., էջ 27, 29-30, 35: Հմմտ. նաև **A. Meillet**, *Altarmenisches...*, էջ 45, 47, 49-50, 66, **H. Jensen**, նշվ. աշխ., էջ 48, **Յ. Գ. Туманян**, նշվ. աշխ., էջ 195-200:

<sup>37</sup> **Ա. Աբրահամյան**, նշվ. աշխ., էջ 51: Տե՛ս նաև էջ 41, ծան. և **Պ. Շարափսիանյան**, Գրաբարի դասընթաց, Եր., 1974, էջ 148-149, 145:

<sup>38</sup> Տե՛ս **B. Comrie**, *Form and Function in Identifying Cases*, In: **F. Plank** (ed.), *Paradigms: The Economy...*, էջ 41-55, նաև՝ **B. Comrie**, *On Delimiting Cases*, In: **R. D. Brecht and J. S. Levine** (eds.), *Case in Slavic*, Slavica Publishers, Inc., 1986, էջ 86-106, **I. A. Mel'čuk**, *Toward a Definition of Case*, In: **R. D. Brecht and J. S. Levine** (eds.), *Case in Slavic...*, էջ 35-85, **B. J. Blake**, *Case*, 2<sup>nd</sup> ed., Cambridge University Press, 2004, էջ 22-24:

<sup>39</sup> Տե՛ս **Գ. Ջահուկյան**, *Հին հայերենի հոլովման...*, էջ 91-92:

ձևույթի համար: Իսկ բաղաձայնական հիմքով հոլովական տիպերի դեպքում հոգ. ուղղ. *ք* ձևույթի կուտակական բնույթին նպաստում է նաև եզակի ուղղականի և հոգնակի ուղղականի հոլովական հիմքերի տարբերությունը (հիմքային տարբերակայնությունը): Այդպես էլ հոգ. հայց.-ներգ. *-u* և հոգ. սեռ.-տր.-բաց. *-g* վերջավորությունների կուտակական բնույթի (այսինքն՝ հոլովաթվային կազմիչներ լինելու) մասին են վկայում, մի կողմից, դարձյալ սինկրետիզմի տարբեր դրսևորումները և հաճախ եզակիի ու հոգնակիի համապատասխան հոլովաձևերում հոլովական հիմքերի ոչ նույնականությունը, մյուս կողմից՝ որոշակի հոլովական տիպերի դեպքում նաև այն հանգամանքը, որ հոգ. սեռ.-տր.-բաց. *-g* վերջավորությանը եզակի թվի համապատասխան ձևում հակադրվում է մեկ այլ կուտակական հոլովաթվային կազմիչ՝ կա՛մ եզ. սեռ.-տր.-բաց. *-j*, կա՛մ էլ եզ. բաց. *-է* վերջավորությունը: Բացի այդ, հին հայերենի անվանական հոլովումը բնութագրվում է ոչ միայն տեղային, այլև ընդլայնված արտահայտողականությամբ, քանի որ հաճախ հոլովաթվային իմաստներն արտահայտվում են երկու ձևաբանական տարրի (հերթագայվող հիմքի և վերջավորությունների) սահմաններում: Իսկ հոլովական հարացույցների տարբերակայնությունը պայմանավորված է ոչ այնքան հոլովական վերջավորությունների բազմազանությամբ, որքան հոլովական հիմքերի կազմության և հիմքային տարբերակների փոխհարաբերության տարատիպ օրինաչափություններով:

**Բանալի բառեր** – *առանձնական հոգնակերտ, կուտակական հոլովաթվային ցուցիչ, հին հայերենի անվանական հոլովումը, ընդլայնված արտահայտողականություն, տարբերակայնություն, տարամասնիկություն, երկատված ձևաբանություն*

**САРГИС АВЕТЯН – Насколько флективным или агглютинативным является древнеармянское именное склонение?** – Общепринято, что древнеармянское именное склонение в основном характеризовалось кумулятивным выражением граммем числа и падежа и в то же время проявляло некоторые элементы агглютинативности (некоторые сепаративные показатели числа и падежа). Однако вопрос о точной идентификации и различении кумулятивных и сепаративных показателей внутри парадигмы является спорным, а мнения учёных расходятся. В статье аргументируется, что только для инструменталиса сепаративное выражение граммем можно однозначно признать характерным (с показателем падежа *ւ/ի/ք*, встречающимся как в единственном, так и во множественном числе, и показателем множественного числа *-ք*), тогда как окончание номинатива множественного числа *-ք*, а также окончания генетива-дativa-аблатива *-g* и акузатива-локатива *-u* множественного числа следует считать кумулятивными показателями числа и падежа. Кумулятивный характер этих окончаний подтверждается частично разными синкретизмами в разных парадигмах или в единственном и множественном числах внутри одной и той же парадигмы и частично тем обстоятельством, что кумулятивным показателям множественного числа в единственном числе часто противостоят другие кумулятивные показатели числа и падежа (а именно, показатель генетива-дativa единственного числа *-j* или показатель аблатива един-

ственного числа *-t*) в разных типах склонения.

**Ключевые слова:** *древнеармянское именное склонение, кумулятивное выражение граммем числа и падежа, сепаративные показатели, кумулятивные показатели, разные типы склонения, разные синкретизмы в разных парадигмах*

**SARGIS AVETYAN – *To What Extent Flexive or Agglutinative is the Old Armenian Nominal Declension?*** – It is widely accepted that the Old Armenian nominal declension was mainly characterized by cumulative (flexive) exponents and it exhibited some elements of agglutination (some separative exponents) as well. However, the question of the exact identification and distinction of the cumulative and separative markers within the paradigm is controversial and scholars' views vary. It is argued in the article that only the instrumental can unequivocally be acknowledged as having separative exponents (with its case marker *ւ/վ/ր* occurring both in the singular and plural, and plural marker *-ք*), whereas the ending of the nominative plural *-ք* as well as those of the genitive-dative-ablative plural *-ց* and of the accusative-locative plural *-ու* should be considered cumulative case-number markers. The cumulative character of the latter endings is borne out partly by different syncretisms in different paradigms or in the singular and plural within the same paradigm, partly by the facts that the plural cumulative markers are often opposed by other cumulative case-number markers in the singular (namely, by the genitive-dative-ablative singular marker *-յ* or by the ablative singular marker *-տ*) in different declensional types.

**Key Words:** *the Old Armenian nominal declension, cumulative (flexive) exponents, separative exponents, declensional types, cumulative case-number markers, different syncretisms in different paradigms*

Ներկայացվել է՝ 27.08.2020, Գրախոսվել է՝ 11.09.2020, Ընդունվել է տպագրության՝ 18.12.2020